

կախելու, որովհետեւ կործանմունքէ կործանմունք տարինք զինքը... Ո՛հ, աստուած իմ, աստուած, ինչ է աս վիճակը: Եթէ մենք քու խորհրդոցդ հետեւէինք՝ կարելի է շատ լաւ վիճակի մը մէջ փինք գտնուէր, բայց ոչ երբեք այսպիսի գազանի մը՝ այսպիսի անարգ բռնաւորի մը կամքին խաղալիք կը լինէինք: Այո, դու միակ մէկ մարդ մը գտնուեցար, որ աչք ունեցար տեսնելու. ինչո՞ւ աստուած զքեզ այդ լեռներուն գլուխը գրաւ եւ զիս նախարարական գահին վրայ, ես որ արժանի չեի՝ եւ դու որ արժանի էիր:

— Եթէ կընդունիս թէ սխալ ճամփու մէջ ես, ի՞նչ կարգիլէ զքեզ. սթափե՛, ե՛լ, ետ դարձի՛ր. ես խեղճ սինլթոր սասնցի՝ խօսք կ'ուտամ քեզ քսան հազար երկաթի մարդ իջեցնել իմ լեռներես, քսան հազար յուսահատ մարդ էլ այդ ոտնակոխ հնձան Վասպուրական կրնայ տալ մեզի, քու Մոկաց եւ Շիրակայ գաւառները քսան հազար մարդ կրնան յարուցանել. եթէ քառասուն հազար էլ միւս նախարարութիւնները տան՝ հարիւր հազար զօրքով մենք այդ Բուդայի երկու հարիւր հազար այլասեռ եւ այլալեզու աւազակները բնաջինջ կ'ընենք, մենք որ «ի վերա կանանց եւ որդուոց» պիտի կռուինք մեր նախահոր բացատրութեամբ: Զիմա մանաւանդ որ առաքինի կաթողիկոս մը եւս ունինք, որ յանձն կառնու իր կեանքը տալ ազգին համար, եւ որ ես անձամբ կը ճանչեմ:

— Ուսկի՞ց կը ճանչես զինքն...

— Երբ հօրեղբորդ բանտէն փախստական անոք, անօգնական կը պտըտէի, այդ Չաքարիան իւր տունը ամիսի մը չափ զիս պահեց, տեսայ եւ ճանչեցի ան ատեն, որ առաքինի եւ պատուական մարդ էր, եւ ուրախացայ, որ հայոց եպիսկոպոսունք եւ իշխանք եկած պատուհասէն զարհուրեալք՝ արժանաւոր ընտրութիւն մը ընելու համար գնացին փնտրեցին եւ եկեղեցական աստիճաններէ դուրս արժանաւորը գտան Թադէոսի եւ Գրիգորի աթոռին վրայ նստեցնելու համար: Բայց մեր խօսքէն հեռացանք, Զայոց Սպարապետ, կրնա՞ս երկրորդ Վարդան մը լինիլ Զայաստանի համար, Վարդան աւելի խելօք, աւելի հանդարտ, վասնզի ես չեմ